# ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ
## Հավելված 1

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Բանկ) հայտարարում է աուդիովիզուալ, կոնֆերանս, թարգմանչական և ցանցային սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների իրականացման,

հրապարակային **բաց** մրցույթ, կից ներկայացվող քանակներին և պահանջներին համապատասխան՝ առանց կոնկրետ ապրանքանիշերի կամ մոդելների հղման:

- **Պահանջվող համակարգեր և սարքավորումներ:**
    - **Կոնֆերանս և Ձայնային համակարգեր:** Կոնֆերանս սերվերներ, սնուցման և ձայնային պրոցեսորներ, թվային ուժեղացուցիչներ, բարձրախոսներ, անլար և լարային խոսափողային համակարգեր (ներառյալ երկար և կարճ ձողերով խոսափողներ), մասնակցի և դիտորդի սարքեր, ականջակալներ.
    - **Թարգմանչական համակարգ (Setup for Translator):** Թարգմանչական և հեռարձակման պատասխանատու սարքեր, թարգմանչական վահանակներ (մոնիտորներով/տեսաելքով), անհատական ականջակալներ.
    - **Տեսակոնֆերանսային և Վիդեո համակարգեր (Video Conference Devices):** Հիմնական տեսակոնֆերանսային պրոցեսորներ (արհեստական բանականության աջակցությամբ), կառավարման սենսորային վահանակներ (պլանշետներ), 4K PTZ տեսախցիկներ՝ համապատասխան շարժական կամ հենվող կառուցվածքներով, մեծ և միջին չափի էկրաններ/մոնիտորներ (ցուցադրման սարքեր).
    - **Ցանցային և Սնուցման սարքավորումներ:** L3 անջատիչներ (switches), անխափան սնուցման սարքեր և լարման կարգավորիչներ (UPS), բազմաֆունկցիոնալ մատրիցային փոխարկիչներ (matrix switchers), ռակային (rack) պահարաններ՝ անհրաժեշտ ֆիլտրերով, փոխարկիչներով և միացման բաղադրիչներով.
    - **Մալուխներ և Լիցենզիաներ:** Բարձր արագության միացման մալուխներ (HDMI, Cat 6A, Cat 5e, անասնական/կոաքսիալ, համակարգային և բարձրախոսի մալուխներ), ձայնային և տեսահամակարգերի ծրագրային լիցենզիաներ.
- **Ծառայություններ (Տեղադրում և Կարգաբերում):**
    - Տեսահամակարգի մալուխների անցկացում և տեղադրում.
    - Խոսափողների, բարձրախոսների միացում և թեստավորում.
    - Աուդիո, վիդեո, թարգմանչական և հեռարձակման համակարգերի կազմաձևում (configuration) ու կարգաբերում.
    - Ռակային պահարանի հավաքում և սարքավորումների տեղադրում.

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Բանկի կենտրոնական գրասենյակ, ք. Երևան, Արամի 82-84 հասցեով, Լոգիստիկայի բաժին:

Մրցույթի հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2026թ.-ի սեպտեմբերի 2-ը, ժամը 13:00-ն:

Մրցույթի հայտերի բացման նիստի օրն է 2026թ.-ի սեպտեմբերի 3-ը:

Մրցույթի հայտերը ամփոփվելու են մինչև 2026թ.-ի սեխտեմբերի 9-ը:

Մրցույթի մասնակցության համար նախավճար սահմանված չէ:

Մրցույթի հաղթող ընկերության հետ պայմանագիրը կարող է կնքվել բացառապես <<ԱԿԲԱ ԲԱՆԿ>> ԲԲԸ-ում բանկային հաշիվ ունենալու դեպքում:

Մրցույթի մասնակցության համար մասնակիցները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Բանկի կողմից սահմանված ձևով կազմված և պատշաճ կարգով լրացված Մրցույթի մասնակցության հայտ՝ eFO 81-00-05,
2. մրցույթի մասնակցի հայեցողությամբ այլ անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր, որոնք կհաստատեն իր կողմից կատարվելիք աշխատանքների կամ մատուցվելիք ծառայությունների որակը:

Բանկը, մրցույթի հայտ ներկայացրած մասնակիցների ցանկից, իր ներքին իրավական ակտով սահմանված կարգով ընտրում է այն մասնակցին, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է լավագույն պայմաններ: Բանկը տասն օրվա ընթացքում հաղթող ճանաչված մասնակցին առաջարկ է ներկայացնում իր հետ կնքել աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու պայմանագիր:

Մրցույթի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել առձեռն կամ փոստային ծառայության միջոցով՝ պատվիրված նամակով:

Մրցույթի հայտերը պետք է ներկայացվեն սոսնձված, կնքված և ստորագրված ծրարով (կնիքի բացակայության դեպքում՝ միայն ստորագրված):

Ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից: Ծրարի վրա պետք է նշվեն մրցույթի մասնակցի անունը ազգանունը (անվանումը), հասցեն, հեռախոսահամարը, ինտերնետային կայքի հասցեն (առկայության դեպքում) և կատարվեն հետևյալ գրառումները. «Մրցութային հանձնաժողովին», Բանկի հասցեն, «Չբացել մինչև մրցույթի հայտերի բացման նիստը»:

Անհրաժեշտ նյութերի հետ կապված տեղեկությունների և տարածքին ծանոթանալու համար կարող եք զանգահարել Բանկի Տեխնիկական աջակցման բաժնի պետ՝ Աշոտ Բադալյանին (37494) 700-816 հեռախոսահամարով:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել (37410) 31-88-88 (7077) հեռախոսահամարով, Լոգիստիկայի բաժնի պետ Արտակ Ղազարյանին: